

ԱԿՆԱՐԿ ՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՂՆՁԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գիտենք թե՛ վաղուց Հայերը պղինձ եւ յարակից մետաղի խառնուրդներու, մանաւանդ՝ անագապղինձի մեծ վարպետներ էին, եւ նոյնիսկ նախառարտական շրջաններէն մեղի հասած են զմայլելի եւ բազմաշխատ նմոյշներ: Աւելի ուշ, իսլամական խալիֆաներու ժամանակ կը վկայուի որ Հայաստանէն կ'արտածուէին պղինձէ ամաններ: Արաբ աշխարհագիրը եւ ճանապարհորդ՝ Իպն Պաթուլար, երբ 1333ին, Երզնկայէն կ'անցնի, կը վկայէ որ Երզնկա քաղաքին «Բնակիչներուն մեծամասնութիւնը Հայեր են...: Երզնկա ունի գեղեցիկ հիւսուածեղէններ, որոնք իր անունով կը յիշուին: Ունի պղինձի հանքեր, որով կը շինեն ամաններ եւ աշտանակներ, որոնց նման այլուր ալ հանդիպած եմ, եւ որոնք կը նմանին մերիններուն»: Բնականաբար, կարճ ու անբաւարար վկայութիւն մըն է յիշուածը, սակայն այնուհանդերձ մենք կարեւոր կը նկատենք, քանի որ որոշակի կը նշուի այդ շրջանին մէջ պղնձագործութեան զարգացումը Հայոց ընդ՝ Երզնկա:

Անտարակոյս, ըլլալու են ուրիշ օտար վկայութիւններ ալ, սակայն կը կարօտին գիտական փնտռողներ:

Փրականութիւն է որ մեր հին վանքերը մեծաթիւ մեծ ու փոքր պղինձէ ամաններ ունէին, սաներ, կաթսաներ, ուխտաւորներու եւ մատաղի կամ այլ պահանջներու համար, որոնք այժմ անհետացած են: Երուսաղէմի մեր վանքին մէջ եւ գուցէ դեռ էջմիածին՝ ի դործածութեան ըլլան անոնք:

Գաղափար մը տալու համար անոնց թէ՛ քանակին եւ թէ՛ որակին, յիշենք, որպէս օրինակ, էջմիածնի վանական պղնձեղէններուն մասին՝ անցեալ դարուն վերջերը գրուած ցուցակ մը, ուր կը կարդանք. «1896 թուին, Մայր Տաճարի արեւելեան կողմում գտնուած հին սպարանի շինութեան ներքին յարկում, պահեստի դարանի մէջ են գտնուած այն բոլոր պղնձեղէն ամանները, որոնց արձանագրութիւնները վերծանուած են այս տետրակում: Հին սպարանի շէնքը՝

1. Յ. ՔԻՒՐՏԵԱՆ, Երիզա եւ Եկեղեցաց գաւառ, Ա. հատոր, տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1953, էջ 285:

անցեալ դարում եղել է վեհարան, իսկ այս դարում՝ Ժառանգաւորաց դպրոց: Այժմ այդ շինութիւնը բոլորովին վերցուած է»²:

Վերոյիշեալ գրքովը, առանց որեւէ ուրիշ նախաբանի, թիւ 10-ը կը սկսի ցուցակագրել էջմիածնի գտնուած պղնձեղէնները, տալով անոնց կշիռը, մեծութեան չափերը, ամաններու վրայի արձանագրութիւնները, առանց բնագրին տղադրութիւնները պարզելու կամ հաթիւր թուականները վերծանելու: Կը ցուցակագրուին 1613 կտոր պղնձեղէն ամաններ, ինչ որ արդարեւ մեծ գանձ մը պէտք է նկատել. այդ բոլորէն միայն 735 կտոր թուական ունեցած է:

Ձարմանալիօրէն, ո'չ մէկ բացատրութիւն կը տրուի թէ՛ էջմիածնապատկան այդ 1613 կտորները ինչու հաւաքուեր են «հին տարւանի... ներքին յարկում, պահեստի դարանին մէջ», որ անտարակոյս՝ կապ ալ չունէր խոհանոցին հետ. եւ այդպէս հոն մնացած այդ վանական գանձը բոլորովին զրկուած պիտի մնար՝ մաքուր, ապահով ու խնամքով պահուելու կարելիութենէն:

Շատ աւելի զարմանալի է էջ 55ի այն վկայութիւնը եւ ցանկը, որուն համաձայն՝ այդ խումբէն 83 պղնձեղէն ամաններ «ուղարկուած են Պետերբուրգ, Հնագիտական (Ռուս) Վայսերական Մասնաժողովին»: Բայց անկէ էջմիածնի, կամ գոնէ այժմ խորհրդ. Հայաստանի Պետ. Պատմ. Թանգարան (Երեւան) վերադարձուած ըլլալուն ո'չ մէկ Պետ. Պատմ. Թանգարան (Երեւան) վերադարձուած կը մնան:

Էնիւնկրատի Հերմիտաժի Թանգարանը կը մնան: Էջմիածնի վանական պղնձեղէններու 1896ի ցանկը, դժբախտաբար, զուրկ է հին թուական կրող ամաններէ: Ամենահինը ՌԿԶ (1617) բար, զուրկ է հին թուական կրող ամաններէ: 1743 թուականէն ըլլալու չափ նոր թուականէն է, միւսները՝ մինչեւ 1743 թուականէն ըլլալու չափ նոր տարեթիւեր ունին:

Եթէ 1896 թուականին՝ էջմիածնի կային 1613 պղնձեղէն ամաններ, որոնց հնագոյնը՝ 1617էն, դժուար չէ խորհել որ էջմիածնի ունեցած ըլլայ պղնձեղէններու ճոխ հաւաքածոյ մը, 1617էն շատ անցած ըլլայ պղնձեղէններու ճոխ հաւաքածոյ մը, կամ ալ նոր ւելի հին, որոնք՝ դժբախտաբար՝ կամ կողոպտուեր են, կամ ալ նոր ամաններու պատրաստութեան ատեն՝ հաւանօրէն ձուլուեր. ինչ որ մեծ կորուստ մըն է հնագիտութեան համար:

Այստեղ նկատել կու տանք նաեւ թէ՛ պղնձեղէնները երբեմն «կրկնադրութիւն» ալ կրնան ունենալ, այսինքն՝ երբ աման մը տէր էր փոխէր, նոր տէրը Գնջի կու տար հին արձանագրութիւնը՝ որքան որ կարելի էր, եւ նոր արձանագրութիւն չէր թուական կ'աւելցնէր՝

2. 1896 թուին Ս. էջմիածնում գտնուած եին պղնձեղէն ամանների ցուցակը եւ արձանագրութիւնները: Կազմեց՝ Գալուստ Տէր-Մկրտչեան, օժանդակութեամբ՝ Սահակ Վրդ. Ամատունու: Պարիս, տպ. «Բանասէր»-ի, 1906 (Թղթակազմ, ութածայ, էջ 70):

իր կողմէ: Այսպէս, մերթ նաեւ իսլամ բնադրով պղնձեղէններու վրա՝ հայերէն կրկնադիր արձանագրութիւն կը դրոշմուէր, կամ ալ հակառակէն՝ հայ քնադիրն վրայ իսլամ կամ ալլ օտար լեզուով կըրկնադիր արձանագրութիւն:

Սորհրդ. Հայաստանի պեղումներու ընթացքին զտնուած են մեծաթիւ ընտիր պղինձ ու անագապղինձ կտորներ, ընդհանրապէս անթուական:

Մեր արուեստի պատմութեան զլուս-դործոցներէն ծանօթ է Հաղարծինի պղնձեայ եւ առիւծաբլթակ մեծ կաթսան, հետեւեալ արձանագրութեամբ. «Թ(վիմ) ՈԶԱ (=1232), Ես, Զոսիմայ քահանայ, մեղապարտ անձամբս ստացա գոբս յարդեաց իմոց. միաքանիս Ետու իմն ի տարիս Ա ժամ, Գորգա Զարաւոր տաւմիմ»: Այս կաթսան՝ որ պէտք էր Երեւան Պետ. Պտմ. Թանգարանին մէջ պահուիլ՝ իբր ընտրելագոյն աղբային ժառանգութիւն մը, կը մնայ Լենինկրատի Հերմիտաժի աշխարհահռչակ Թանգարանը, ուրիշ հայապատկան իրերու հետ:

Բարեբախտաբար, սակայն, Երեւան Պետ. Պտմ. Թանգարանը կը պահուի հայերէն արձանագրութեամբ ուրիշ սլուս-դործոց պղնձեայ խոշոր փախէ մը, արուեստի եւ պղնձադործութեան շատ ընտիր նըմոյշ մը, Թանգարանին թիւ 6089 առարկան, զոր քանիցս տեսնելու մեծ ուրախութիւնն ունեցած եմ: Թողունք որ Եւգինէ Մուչեղեան ինքն իսկ նկարագրէ զայն. «Պղնձից է, ամբողջ մակերեսը փորագրուած. պատկերուած են Զոդիակի ամիսները, զանազան ֆանտաստիկ կենդանիներ, բուսական եւ երկրաչափական հարուստ դարդանաչեր (գծածեւեր): Վրան կան հայերէն եւ արաբերէն արձանագրութիւններ: Բերում ենք միայն հայերէն արձանագրութիւնները: Կենտրոնի շրջանակում գրուած է սինին (ափսէն) պատրաստող վարպետի անունը. «Ի ԹՎԻՍ ԶԻԶ (= 1477) ՇԻՆԵՑԱԻ ՍԵՂԱՆՍ ԶԵՌԱՄԲ ԿՈՒՌՃԻ ՎԱՐՊԵՏԻՆ»: Եղբին վրայի արձանագրութիւնը. «ԹՎԻՍ ԶԵԹ (= 1510) Ի ՄՏԵՂԾՈՂԻՆ ԲՈՂՈՐԳՈՒՑ ՍԵՂԱՆՍ ԼՅԵԱԼ ԱՄԵՆԱԼԻՑ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑՆ Է ՊՈՒՏԱՅԻՆ, Ի ՎԱՅԵ-ԼՈՒՄՆ ՈՐԴՈՑ ՆՈՐԻՆ ԽՈՃԱ ՄԻՐԱՔԻՆ ԵՒ ՀԱՐԱԶԱՍ ՅԱԿՈԲԻՆ»: Միջին մասում. «ՊԱՐՈՆ ՎԱՐԴ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՏՈՒՐ»: Միւս արձանագրութիւնը՝ դարձեալ միջին մասում. «ՍԱՔԱՐ ՊԷԿ(Ի) Ո(Ր)ԴԻ ԱՅՏԻՆ»:

Իրաւամբ, դիտել կու տայ Մուչեղեան, «ինչպէս պարզուում է արձանագրութիւններից, սինին ունեցել է մի քանի տէր, որոնք իրենց անունը, որպէս յիշատակ, թողել են վրան»³:

3. ԵԻԳԻՆԷ ՄՈՒՇԵՂԵԱՆ, Երեւանի Պետական Պատմական Թանգարանի հայերէն արձանագրութեամբ առարկաներ: Երեւան, 1964, էջ 127:

Հնադոյն յիշատակարանը 1477 թուականէն է. չինոզը ինքզինք կը կոչէ «Կաւուի վարպետ»: Կաւուի կը նշանակէ «վրացի». սակայն յատուկ անուն մը չէ, գուցէ իր ունեցած համբաւին համար՝ կը գոհանար այդ անուանակոչումով: Նկատելի է, միւս կողմէ, որ վրացի վարպետը ոչ մէկ տեղ վրացերէն յիշատակարան չէ արձանագրած. ասիկա մեզի մտածել կու տայ թէ մի՞ գուցէ վրացի մը ըլլար յիշեալ վարպետը: Իսկ նկատմամբ արաբերէն արձանագրութեան՝ ոչ ինչ կարող ենք ըսել, քանի որ անոնց պարունակութեան անծանօթ ենք, եւ թարգմանութիւն ալ չէ տրուած: Գիտենք, սակայն, թէ երբեմն արաբատառ արձանագրութիւններ՝ հայկական իրերու վրայ փորագրուած են լոկ իբր զարդարանք, մերթ՝ նոյնիսկ անիմաստ:

Եկեղեցական կամ վանական Հաստատութիւններէն զատ՝ կային նաեւ հարուստ ընտանիքներ, որոնք ճոխ հաւաքածոյ մը կ'ունենային պղնձեղէն անօթներու: Օրինակ, իմ մօրենական մեծ պապս, 1878ին, Երզնկա, իր ընդարձակ կտակին մէջ, ուր կ'ըսէ. «Ես ատորադըեալ Սուքիսա Քաղանճեանս, որդի Մ(ահտեսի) Յարութիւնի, որդի Մ(ահտեսի) Աւաղի, որդի Մ(ահտեսի) Սարգսի, եւ... ըստ մեր ազգաբանութեան՝ ի հին Քիւրտիստանէն Եղիկեան, որ բնակեալ ի զաւառն յԵրիզա, չորս դարերէ յետէ», իր թողուցած ընդարձակ կալուածներուն, դրամական հարստութիւններուն, եւն... ի շարքին՝ կը յիշէ նաեւ «հարիւր վաթսուն հոխայ պղինձ», «տասն եւ ինն հոխայ տեօքմէ (թափօն) թուճ (արոյր)», «հարիւր քսան տրամ արծաթ»:

Ասիկա մեզի ցոյց կու տայ՝ թէ շատ Հայերու տան կարասիներուն մէջ ո՞րքան խոշոր քանակութեամբ պղնձեղէն իրեր գոյութիւն ունէին, տնային դործածութեան համար, որոնցմէ մեծ մաս մը անշուշտ շուկայէն գնած էին, եւ յաճախ հայերէն արձանագրութիւններով ճոխացուցած: Դժբախտաբար, մեծ մասամբ անհետ կորսուած են. մեր պապենական Գաղանճեան պղնձեղէններէն ոչինչ հասած է մեզի, ուր գոնէ մեր գերդաստանին անուան յիշատակութիւնն ըլլար:

Հսկայ է, ուրեմն, կորուստը, հայերէն արձանագրութեամբ պղնձեայ ամաններու: Փրկուածներով է որ պիտի կերտենք մեր արուեստի պատմութիւնը, գուրդուրալով մէն մի կտորի վրայ:

Այստեղ կու տամ ցանկը հաւաքածոյիս հայերէն արձանագրութեամբ պղնձեղէններուն, որոնք պիտի պահուին Վենետիկ, Ս. Ղազարու Թանգարանը: